

էր և մեզի տաւոցեց թէ երկուտասան ամ-
բողջ հատորք անոնցմէ կը պահուէին եկե-
ղեցեաց մէջ ընթերցանութեան համար. և
այդ պատուական և ընտիր յիշատակարան՝
յարեւելից անցաւ յարեմոտս, Բոլլանդեան
հմուտ և բազմախօստակ վկայազորոց ձեռքը :
(Շարայարեղի)

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՇԱՆՏՐԻ ՅԱՐԵՒԵԼՍ

(Տես յէջ 255).

ԻԶ

Մեծ ու փոքր Արարատ. — Տեսարանն և կազմութիւնն. — Սարդար—Յուզաք
կիրճը. — Վերելք. — Մեր բանակատեղին. — Նկարագեղ տեսիլ վայրացն. —
Մարդանք և աղօթք կոզակաց :

3 Յուլիս. կը հասնիմք յԱրալըզ, որ
Մեծ Մասեաց ստորտը կառուցուած զիւզ
մ' է, 832 մետր բարձրութեան վրայ, ու
բով ճամբայ ելլելնէս. ետքը՝ կրնանք լսել
թէ անմիջապէս վերելքն ալ կը սկսինք :

Հանգիստ ճամբայ մը կը տանի զմեզ
մինչ ի Սարդար—բուլար. բայց բաց ի փշա-
լից թուփերէ երկիրը ուրիշ բուսականութեան
հետքը չունի : Բիւրատր զեղեցիկ մողէզք
(Phrynocephalus Raddei) աղիս անդին
կը վազվրուտեն, նոյնպէս գեղեցիկ միջատք՝
յորս հոչակեալ է P'halangium araneodes
կոչուածը : Օթեանը հեռի է և դժուարուտ.
զի բաց յարագ վերելից՝ ծարաւէ ալ դժըն-
գակարար կը նեղուինք, և սեղ մը աչուր-
նիս չի հանդիպիր ջրոյ նաև փոքրիկ քոնակու-
թեան մը : Տեղոյն ցամաք նկարագիրն ան-
տարբեր կ'ընէ զիս արօտագեղ վայրացն՝ որոց
կը հանդիպիմք, և երկվարաց բազմութիւն ե-
րամակին՝ որ զուշակել կու տան թէ մտտեցած
ենք կոզակաց բանակատեղին՝ որով մեր կրած
զժուարութիւններն լմրննալու վրայ են :

Հարիւրապետ մը կը փութայ առջ անց-
նիլ ծանուցանելու մեր ժամանումը. ու երբ


ժամը երկուքին կը հասնինք՝ ուղղակի կ'ա-
ռաջնորդեն ի վրան սպային, և նա ամենայն
մեծարանք և սիրալիք ընդունելութիւն կը
ցուցընէ, մինչև որ ժամանեն կարաւանն և
մեր յատուկ վրանաց հանդերձանք : Տեսնե-
լով հոն ջուր և դաշարի՝ որ գեղով և զովու-
թեամբ կը թուին մրցիլ, ինքզինքս արբայու-
թեան մէջ փոխադրուած կը կարծեմ. որով-
հետև Չանկէզուրի ամենագեղ անտառներէն
ստղին՝ աչքերս տեղ մը տեսած չէին այսչափ
բազմութիւն և շնորհ ծաղկաւետ, և երբէք
թոքերս շտեմարանած չէին այդչափ կենդանի
և մաքուր օդոյ պաշար :

Ելինէ Ռեկիւլէ զօդդիացի աշխարհագիր՝
մեծանուն կարլ Ռիտտէր գերմանացոյն հե-
տևելով կ'ըսէ, թէ Արարատ լեռը կեղզուական
սրածայր մ'է բարձր ուրախարթից՝ որ հին
աշխարհին մէջ տարածուած են՝ Բարեյուսոյ
դիւնն մինչ ի կիրճն Բերինկի, և կը բար-
ձրանայ ընդ արևմտեան երկայնութիւն Երաս-
խայ և Եփրատոյ միջոցն եղող հրաբխային
լեռանց շղթայից :

Արարատ, կամ ի Հայոց տրուած Մասիս
անուանք, մեծութեան և վեհմութեան ցա-

զափար մը կ'արթնցընեն մտաց մէջ. ուստի և զարմանք չէ որ շորս կողմի դաշտաց և հովտաց բնակիչքը՝ իրեն ձինսապատ և երկար դարեր անմատչելի համարուած գագաթը տես-

նելով, ըսին թէ ջրհեղեղէն ետքը հոն դադրեր աւ հանպէր է տապանն, որ կը կրէր յինքեան՝ գերկորոզ հայրն լինելութեան աշխարհի զնոյ՝ և ամենայն կենդանիք, զորս



Այրաբառ լեռ.

Աստուծոյ հրամանաւ հետն առեր էր՝ անոնց սերնդեան կրկին անելութեան. համար:

Քանուհինգ կամ երեսուն հազարամետր հեռու՝ հայկական դաշտին երեսէն նկատե-

լով, զրեթէ շարունակեալ հակումն կամ ծրուութիւն մը կը ներկայացընէ ի ստորուէ մինչ ի գագաթն, և աչքի մէկ նայուածքով այդ ահագին հակման ամբողջութիւնը կը

տեսնուի. այնպէս որ եթէ այդ մեծղի ձոյլին պատուանդանին մերձենաս, այն աստե՛ն միայն կրնաս ըմբռնել իրական ձևը :

Արարատեան ձոյլը (massif) 2700 մետր բարձրութենէն անդին երկու կը բաժնուի. նուազ բարձրութիւն ունեցողը, կամ Փոքրն Արարատ՝ որ զէպ ի արեւելեան հարաւ կ'իյնայ, 3396 մետր բարձրութիւն ունի. գրեթէ կանոնաւոր կոնաձև է՝ քիչ մը կլոր ի գագաթան, ու 45 աստիճանի անկիւն կը ձևացընէ, գրեթէ աթոռակ կամ թամբ մը ձևացընելով երկու լեռանց մէջ, իսկ Մեծն Արարատ՝ որոյ բարձրութիւն, վերջին քննու-թեանց համեմատ մինչև 5156 մետր է և աւելի, նոյնպէս կը ձևացընէ զէպ ի հիւսիսային արևմուտք՝ կրկնածայր, բայց բազմապատիկ անկանոնութիւններ ունեցող կո՛ն մը :

Հիւսիսէն զէպ յարեւելս զառ ի վայրը կը շարունակուի ընդհակառակն՝ գրեթէ առանց ընդհատութեան ի ստորուէ մինչ ի գագաթն, և մերթ կարեւոր յեղափոխութիւններով, ուրոնք որչափ որ գագաթան մտնենա՛ս՝ այնչափ զգալի կ'ըլլան : Շարունակութեան նշանաւոր ընդհատութիւն մը կը տեսնուի լեռան հիւսիսակողման միոյ մասին վրայ, և է պատահաւած մը և հեղեղատներէ ձևացած ընդարձակ փոս, որ գրեթէ 2000 մետր բարձրութենէ կը սկսի ու կը վերջանայ 1000 մետր բարձր քարածայտի մը ստորուոր, որոյ գագաթն յաւիտեանական ձեամբք պատած է, և կը տարածուին մինչև ի խորս խոռոչին : Այս կէտին վրայ է Արարատ լեռանց կարևորագոյն սառնարանն. և ի ստորոտ այս պատահաւածին կը գտնուէր զեռ քառասուն տարի յառաջագոյն հայաբնակ Արկուսի զիւղը, որոյ վրայ կրկին պիտի դառնանք խօսելու :

Որչափ ալ Հայոց համար անմատչելի համարուած է Մասիսի գագաթը, սակայն և այնպէս այս վերջի տարիներուն մէջ զանազան եւրոպացի զիտան անձանց կողմանէ տասներկուրէն աւելի վերելք փորձուցան. և թէպէտ ամենք շաշողեցան մինչ ի գագաթն բարձրանալ, բայց այդ յաշողութիւնն ունեցողներ ալ եղան :

Տուրքմենի և Մորիէի անյաջող ջանքն՝

քիչ մը աստե՛նուան համար հաւատարմացոյց անոնց կարծիքն՝ որ անկարելի կը համարէին Մասեաց գագաթն ելնելն : Երբ 1829ին Պարսոգ՝ յաշողեցաւ Պայազխի կողմանէ փորձելով, ու դառնալով՝ կը պատմէր տեսածն, Երեւանի Հայք՝ ինչպէս նաև Էջմիածնի միաբանք ամենեկին չէին հաւատար խօսքին, ինչպէս ինքն ճանապարհորդն կը վկայէ, և ոչ միայն սուտ՝ այլ նաև իբրև հայհոյութիւն կը մերժէին : 1845ին բարձրացաւ Կաւկասի համբաւեալ երկրագէտն Աբիսի հարաւային արեւելեան կամ Սարդար-Քուպրի կողմանէ՝ որ ինչուան այն ատեն, ամեննէն զիւրամատչելի կողմ կարծուած էր : Նայն կողմանէ ըրաւ իր համբաւեալ արշաւանքն հմուտ զօրավարս Խոռոզոյ, և կրցաւ հինգ օր անցընել Արարատեան գագաթանց վրայ : Գրեթէ նոյն ճամբան բռնեցին իրենց վերելից՝ Բաքեր և Կրէսֆիլը 1868ին, և Բրայս ի 1876, Մարկով, երիտասարդ և անվախ ռուս բնագէտն՝ 1888 օգոստոս 13ին ըրաւ իր ուսումնական արշաւանքն, և վերջերս տպագրութեամբ հրատարակեց հրահանգ զի և սրտայայտ նկարագիրը այդ ուղեւորութեան : Իրմէ ետքը՝ օրիորդն Մոսքովիչ, յաշողեցաւ բարձրանալ մինչ ի գագաթն Արարատեան, իսկ 1890ին Լըզէր՝ մեր հասած տեղէն յառաջ չի կրցաւ երթալ : Մեր զիտաւորութիւնը ինչուան ի զլուի լեռինն ելնելը չէր. այլ ամբողջութեան մասամբ շրջապայութիւնն ընել՝ կողիցը կողմանէ, ուրոնք ամուսնոյս համար հետաքննականք էին աշխարհագրական և երկրագիտական տեսակիսով :

Քանի մի զինուորական սպայք կը զրուեսնուին հաս, ընդ որս և Ռաֆայովիչ զօրավար, որ Մարկովէն ետքը Արարատայ վրայ բարձրանալով՝ 1889, յուլիսի 29ին, զրոյն յիտուն աստիճան վար իջած գտեր են ջերմաչափը ի գագաթան լեռին. և թէպէտ այս թուանշան՝ հաւանականաբար չի համապատասխաներ, ըստ Մարկովի, ծայրագոյն ցրտութեան աստիճանի գագաթանն, բայց մերձաւոր գագաթար մը կրնայ ընծայել : Ըստ զիտողութեան և կարծեաց նոյն ճանապարհորդին՝ բարեխառնութեան մեծագոյն աստիճանն

արարատեան ամենաբարձր կիտին վրայ՝ պիտի չանցնի գրոյէն չորս աստիճան վար՝ ասուերի մէջ ։

Մարգար-Քուչաքի մեր բանակազորութիւնն՝ 2425 մետր բարձրութեան վրայ դրուած է, մերձ այն կրճին որ Մեծ Արարատը կը բաժնէ Փորթէն ։ Այս անուն՝ Սարգսրի աղբիւր կը թարգմանուի . վասն զի սարգսրը կամ փոխարքայք՝ Երեւանի՝ ժամանակաւ հոս կու գային ամառ աստեան իրենց վրաններն կանգնելու այն աստատահոտ ջուրերու քով որ հոն քչ ըլիսեն ։ Իսկ հիմա անոնց տեղը դրուած են Երեւանի և Արալըզի կողակը, որ կու գան թէ իրենց համար մաքուր ու առողջարար օդ փնտռելու՝ և թէ երկվարաց առատ արօտաստեղիք ։ Հոն գտնուած ասեննիս՝ երեք խումբք կային անոնցմէ ։

Աղբերին ջուրը՝ ամէն կողմ բաշխուած, քաղցրալուր զղջմամբ կը հոսէ և սրտերնիս կը զուարթացնէ . մինչ կը տարածուի ալուրնուս առջև ընդարձակ տեսարան մը էլրասխայ հովտին վրայ, զոր կը պարագրեն ձիւնապատ լեռանց շղթայք . Զանկէզուրի և Գաբապաղի լեռներն են՝ որոնցմէ յառաջ արդէն անցեր ենք ։

Խոտաշատ և ծաղկազարդ գաշտի մը վրայ հաստատեցինք վրաններն՝ ոչ հեռի հեղեղատէ մը որ Մեծ Մասեաց ձեանց հայելէն կը ձևանայ . և որովհետև զեռ նոր սկսած է ձեանց հայլիը, տակաւին մերձակայ զտուղիքը ձեան թանձր վերտրկուաւ պատած են ։ Մեր կատարելագործուած ու ջրոյ անթափանց վրանք՝ կողակաց զարմանքը կը շարժեն, և չեն յագիբ զանոնք մանր զննելէն ։

Գիշերը կամաց կամաց վրայ կը հասնի, ամենապեղ և պայծառ գիշեր մը, որ այդ մեծափայելու շրջանակին հանդիպը հետ՝ խուրանկ և անմոռանալի տպաւորութեան զգացմունք կը թողու ի մեզ ։ Մասեաց սպիտաւ

կափառ գազաթը կանգուն կեցած է բիւրաւոր աստեղօք փայլուն և մթնազոյն թաւշեայ հաստատութեան տակ, ուր անդին քիչ մը իրմէ հեռի փոքր եղբորը ծրագիրն կը նկատուի ։ Մարութ ու թեթև օդ մը կը ծաւալի սառնորաններէն և զոր լի թօղով կը ծծենք ։ Ո՛րչափ հեռի է մեր սրտէն ցամաք ու չոր գաշտի մը մտածութիւնը, և ո՛րչափ բարեբաւտիկ կը զգանք ինքզինքնիս ։

Միլաւէտ գաշտին վրայ կը բաժնուին մեր վրաններն, որք այդ մեծ տեսարանին մէջ ո՛րչափ փոքրիկը կ'երեւնան ։ Եւ երբ լսիկ կը խորհրդածեմ այս հրաշապարզ բնութիւնը և մտիկ կ'ընեմ խուլ մանչանաց ջրոյն որ քանի մը քայլ անդին արծաթազոյն օձի նման կը ծածանի, և ահա յանկարծ կը լըսուի կողակին զիշերային մաղթանաց ձայնը, զեղեցիկ երգ մը՝ որ ինձ կը թուի թէ մէկէն կ'ելնէ կը բարձրանայ առ ստեղծող ։ Տպաւորութիւնը ամենաբազրք է այն բարձրութեան վրայ, և այնչափ հեռի ի մարդկանէ . և առանց իսկ ուզելու՝ այնպիսի յուզում կը զգամ ի սրտիս՝ որուն չեմ գիտեր ինչպէս յաղթել ։

Մաղթանքէն վերջը, զօրավարն կու գայ հրաւիրելու զմեզ ներկայ ըլլալու կողակաց խաղերուն և պարուց որք կ'երգեն զպարերգս փոքր Ռուսիոյ, իրենց հայրենեացը ու քանի մը ազգային պարեր բռնելէն ետքը, ճիշդ մանր տղայոց զոնութեամբ կը նստին այլև այլ խաղերով զօսնելու ։ Խմբէ խումբ կ'անցնինք, զմայլեալք այս նորատեսակ ներկայացուցմանց վրայ, որոց լուսաւորութեան ծախքը կ'ընեն լուսինն և աստեղը ։ Վերջապէս գանգակի ձայնով նշան կը տրուի որ զօրականաց քնոյն և սպայից ընթերցաց ժամանակն է ։ Յուրտ է գիշերը, աստի և կրկին ծածկոցի պէտքը կը զգանք ։

(Շարայարեկ) .